ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/63

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10073-18 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի 04.06.2018թ. թիվ 03/16/1515-18 գրության հիման վրա, 05.06.2018թ. նախաձեռնել է «Բիդեք» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.06.2018թ. թիվ 03/16/1515-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար 22.05.2018թ. կազմակերպված ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-6 չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Բիդեք» ՍՊ ընկերությունը: Սահմանված կարգով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 24.05.2018թ. N 2 որոշմամբ «Բիդեք» ՍՊ ընկերությանն առաջարկել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը (Հավելվածներ 5 և 5.1 և 5.2): «Բիդեք» ՍՊ ընկերությունը էլեկտրոնային փոստի միջոցով չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովը 01.05.2018թ. N 3 որոշմամբ «Բիդեք» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժել է՝ ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները ընդհանրապես չներկայացնելու հիմքով»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Բիդեք» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10073-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության

գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Ռուզաննա Հախվերդյանը և Գևորգ Ավետիսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/63 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.06.2018թ. թիվ 03/26-3/10073-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի 04.06.2018թ. թիվ 03/16/1515-18 գրությունը, «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.05.2018թ. նիստի թիվ 2 և 01.06.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, «Բիդեք» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի միջոցով ստացված նամակների ցանկի արտատպումը.

«ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի նոր խորքային հորերի հորատման և վերականգնվող խորքային հորերի վերականգնման աշխատանքների գնման նպատակով կազմակերպված «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Բիդեք» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման

հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 24.05.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության 2-րդ կետով որոշել է «Բիդեք» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է 1-ից 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած «Բիդեք» ՍՊԸ-ին առաջարկել՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը (Հավելվածներ 5, 5.1 և 5.2):

Հանձնաժողովը ոչ ավտոմատ ծանուցմամբ 25.05.2018թ. ծանուցել է Ընկերությանը հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու մասին և առաջարկել ծանուցումն ստանալուց հետո հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստթղթերը:

Հանձնաժողովը 01.06.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած «Բիդեք» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկվելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն 31.05.2018թ. դրությամբ Ընկերությունը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը:

Նույն կետի 2-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը՝ «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հիմքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ, բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի քննության նպատակով 11.06.2018թ. Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին տեղեկացրեց, որ Ընկերությունը՝ ստանալով վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ Բողոքներ քննող անձի ծանուցումը, անակնկալի է եկել և Ընկերության էլեկտրոնային փոստով ստացված նամակներն ուսումնասիրելով՝ նկատել է Պատվիրատուի ծանուցումը: Սակայն, Ընկերության ներկայացուցչի խոսքով, նշված ծանուցման վերնագիրը որևէ ուղղորդում կամ նշում չէր պարունակում որակավորումը հիմնավորող փաստթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ, ավելին, չէր պարունակում անգամ Ընկերության կամ Պատվիրատուի անվանումները (առաքողի անվանումը նշված էր որպես «finansakan bajin»): Նշված ծանուցմանը կցված ֆայլը բացելուց հետո միայն Ընկերությունը կարողացել է տեղեկանալ որակավորումը հիմնավորող փաստթղթեր ներկայացնելու Հանձնաժողովի պահանջի մասին: Նկատի ունենալով նշված փաստերը՝ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին խնդրեց տեղի ունեցածը համարել թյուրիմացություն, և Ընկերությանը չներառել Ցուցակում՝ ներկայացնելով Ընկերության էլեկտրոնային փոստին ստացված հաղորդագրությունների ցանկի արտատպումը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձի պահանջով նիստի ժամանակ համակարգչի միջոցով մուտք գործեց «Բիդեք» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստ, որի ուսումնասիրությունից պարզվեց, որ ընկերության էլեկտրոնային փոստին ստացված ծանուցումն առաքվել է 25.05.2018թ. և նշված ծանուցման վերնագիրը որևէ ուղղորդում կամ նշում չի

պարունակում որակավորումը հիմնավորող փաստթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ, ավելին, չի պարունակում նաև Ընկերության կամ Պատվիրատուի անվանումները, իսկ առաքողի անվանումը նշված է «finansakan bajin»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է «ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/3-Ա» ծածկագրով հրավերի

2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հիմնավորմամբ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցման վերնագրում որևէ կերպ չի արտացոլվել նման պահանջ պարունակող փաստաթուղթ հանդիսանալու փաստը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նման պայմաններում Ընկերությունը հնարավորություն չի ունեցել իր էլեկտրոնային հասցեին ստացված բազմաթիվ ծանուցումների թվից տարբերել Հանձնաժողովի՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը և հրավերով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու նշված փաստաթղթերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2018թ. թիվ 03/26-3/8524-18 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ